Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2024-2025 ուստարի)

10-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

***ա) Հայոց պատմություն** (20 **միավոր**)*

1. Ե՞րբ է սկսվել բրոնզի դարը Հայաստանում. 0,5 մ.
   ա/ Ք.ա. IV հազարամյակի սկզբում բ/ Ք.ա. IV հազարամյակի կեսերին
   գ/ Ք.ա. IV հազարամյակի վերջում դ/ Ք.ա. III հազարամյակի սկզբում
2. Ո՞ր կողմից պետք է երկիրը պաշտպանեին Ներշապուհ Արծրունու գլխավորած ուժերը. 0,5 մ.
   ա/ Հյուսիս-արևելք բ/ Հարավ-արևելք
   գ/ Հյուսիս-արևմուտք դ/ Հարավ-արևմուտք
3. Որքա՞ն զորք ուներ Խամսայի մելիքություններից յուրաքանչյուրը. 0,5 մ.
   ա/ 2500-3000 բ/ 3500-4000 գ/ 4500-5000 դ/ 1000-1500
4. Ե՞րբ թուրքերը գրավեցին Թիֆլիսը. 0,5 մ.
   ա/ 1722 թ. աշուն բ/ 1723 թ. գարուն գ/ 1723 թ. ամառ դ/ 1723 թ. աշուն
5. Ո՞վ էր ղեկավարում հայերի ինքնապաշտպանությունը Թիֆլիսում հայ-թաթարական բախումների ժամանակ. 0,5 մ.
   ա/ Արմեն Գարո բ/ Նիկոլ Դուման
   գ/ Վարդան (Խանասորի Վարդան) դ/ Դրո Կանայան
6. Ե՞րբ է չեղարկվել 1903 թ. հունիսի 12-ի օրենքը. 0,5 մ.
   ա/ 1905 թ. հունվարի 22-ին բ/ 1905 թ. օգոստոսի 1-ին
   գ/ 1906 թ. օգոստոսի 17-ին դ/ 1906 թ. օգոստոսի 22-ին
7. Ո՞րտեղ է հրատարակվել «Գեղարվեստ» պարբերականը. 0,5 մ.
   ա/ Փարիզ բ/ Մոսկվա գ/ Ս. Պետերբուրգ դ/ Թիֆլիս
8. Քանի՞ օր է տևել 1909 թ. հայերի ինքնապաշտպանությունը Սսում. 0,5 մ.
   ա/ 5 բ/ 7 գ/ 12 դ/ 13
9. Որքա՞ն զինվոր է կորցրել Օսմանյան կայսրությունը 1724 թ. Երևանի գրավման ժամանակ: 0,5 մ.
10. Ե՞րբ է կառավարել Արտավազդ III-ը: 0,5 մ.
11. Ո՞ր գավառում է կառուցվել Արշակավան քաղաքը: 0,5 մ.
12. Ո՞վ էր Այգեստանում ստեղծված Զինվորական մարմնի ղեկավարը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը համաձայնություն է տվել ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ կազմի մեջ մտցնելուն:
    բ/ Մ. Գորբաչովը ժամանել է Երևան:
    գ/ Մոսկվայում իր աշխատանքներն է սկսել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը:
    դ/ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում քննարկվել է Լեռնային Ղարաբաղի խնդիրը:
    ե/ Ազատ են արձակվել «Ղարաբաղ» կոմիտեի անդամները:
    զ/ Ստեղծվել է «Ղարաբաղ» կոմիտեն՝ Իգոր Մուրադյանի ղեկավարությամբ:
    է/ Սումգայիթում տեղի է ունեցել հայ բնակչության ցեղասպանական ջարդ:
    ը/ ԼՂԻՄ-ում ստեղծվել է Հատուկ կառավարման կոմիտե:
    թ/ ՀԽՍՀ և ԼՂԻՄ վերամիավորման վերաբերյալ ՀԽՍՀ ԳԽ-ն ու Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը համատեղ որոշում են ընդունել:

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Հովհաննես Դրասխանակերտցի 2. Սմբատ Գունդստաբլ 3. Ասողիկ
    4. Ստեփանոս Օրբելյան 5. Մխիթար Հերացի 6. Մխիթար Գոշ
    ա. «Տիեզերական պատմություն» բ. «Դատաստանագիրք» գ. «Տարեգիրք»

դ. «Սիսական նահանգի պատմություն» ե. «Հայոց պատմություն» զ. «Ջերմանց մխիթարություն»

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Հայասան ուներ 700 մարտակառքերից ու 12 հազար հեծելազորից բաղկացած բանակ:
բ/ 1724 թ. սեպտեմբերի 28-ին Երևանն անձնատուր է եղել թուրքերին:
գ/ XIX դ. սկզբին Հնդկաստանի հայերի թվաքանակը 30-35 հազար էր:
դ/ 1728 թ. Դավիթ Բեկի մահից հետո՝ 1731 թ., Օրդուբադում Մխիթար սպարապետը դավադրաբար սպանվել է:
ե/ 1764 թ. Հ. Էմինի ու Հերակլ II-ի՝ Հովհաննին գրված նամակն ընկել է Երևանի խանի ձեռքը:
զ/ 1916 թ. ամռանը կամավորական 8 ջոկատները վերակազմավորվել են հրաձգային 6 գումարտակների:
է/ Սարդարապատի զորաջոկատի հրամանատար գեներալ Դ. Բեկ-Փիրումյանի ուժերը մայիսի 22-ին անցել են հակահարձակման:
ը/ 1922 թ. դեկտեմբերի 10-13-ը Բաքվում հրավիրված Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը վերանվանվել է Անդրկովկասի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետություն:
թ/ Հունաստանի հակաֆաշիստական պայքարում զոհվել են 300 հայեր:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Հորից որդուն անցնող հողերը ավատատիրական հասարակարգում կոչվում էին հայրենիք:
բ/ Պետական պաշտոնյաներին կամ զինվորականներին տրվող հողերը կոչվում էին պարգևականք:
գ/ Հազարապետը ժողովում էր շրջանառության հարկը:
դ/ Արքունի պահակազորն ու թիկնազորը գլխավորում էր Ոստանիկ Հայոցը:
ե/ Աշխարհագիրը բերդերի ու կայազորի հաշվառումն էր:
զ/ Արմինիա նահանգը կոչվում էր ոստիկան:
է/ 1920 թ. դեկտեմբերին Հայաստանում ձևավորված հեղկոմներն ունեին միայն գործադիր իշխանության գործառույթներ:
ը/ Արմֆանը ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղն էր, որը հիմնվել էր 1937 թ.:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 1735 թ. հունիսին Եղվարդում տեղի ունեցած ճակատամարտում օսմանցիները պարտություն են կրել պարսիկներից:
բ/ 1915 թ. սեպտեմբերին 4058 հայեր տեղափոխվել են Եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաքը:
գ/ 1917 թ. մայիսին Թիֆլիսում գումարված Արևմտահայերի առաջին համագումարն ընտրել է Արևմտահայերի ազգային խորհուրդ՝ Վահան Փափազյանի (Կոմս) նախագահությամբ:
դ/ 1918 թ. մարտի 6-8-ը Ալեքսանդրապոլում կայացել է հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների խորհրդակցություն:
ե/ 1920 թ. աշնանը հայկական բանակն ուներ 40 հազար զինվոր:
զ/ 1921 թ. ապրիլի 15-ին Ալեքսանդր Բեկզադյանը բողոք է ներկայացրել Ռուսաստանի իշխանություններին Մոսկվայի պայմանագրի առնչությամբ:
է/ 1940 թ. հանրապետությունում գործում էր 9 բուհ՝ ավելի քան 11 հազար ուսանողներով:
ը/ 1962 թ. ստեղծվել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն:
թ/ 1947 թ. վերացվել է ապրանքների բաշխման քարտային համակարգը:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Մակուի և Սալմաստի քրիստոնյաները պատրաստ էին Հ. Էմինին տրամադրել 18 հազար զորք:

19. Դիտե՛ք նկարը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)



նկ. 1 նկ. 2

ա. Ո՞ր թվականներին է առաջին նկարում պատկերված անձը եղել Հայաստանի ղեկավարը:
բ. Ո՞վ է հաջորդել նրան այդ պաշտոնում:
գ. Խորհրդահայ մշակույթի ո՞ր գործիչն է պատկերված երկրորդ նկարում:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
10-րդ դարում Վասպուրականով էր անցնում միջազգային առևտրի …(1)-ային ուղին, որի վրա առաջացել էին տնտեսական խոշոր կենտրոններ՝ Վանը, …-ն (2), Արճեշը, …-ը (3):

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.
Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 6350 տարեկան է, ո՞ր ժամանակաշրջանի ընթացքում է ստեղծվել (նշե՛ք կոնկրետ անվանումը):

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր նահանգն է նրա հյուսիսարևելյան հարևանը:

23. Նշանավոր ո՞ր դպրոցն է պատկերված լուսանկարում. 0,5 մ.

24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Հայոց պատմությանն ուղղակիորեն առնչվող ո՞ր գործիչն է պատկերված ծաղրանկարի կենտրոնում:
բ. Պատմական ո՞ր իրադարձությանն է առնչվում ծաղրանկարը:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Քանի՞ անդամներ ուներ Սպարտայի ծերակույտը. 0,5 մ.
ա/ 12 բ/ 18 գ/ 28 դ/ 36
2. Որքա՞ն էր Ալեքսանդրիայի փարոսի բարձրությունը. 0,5 մ.
ա/ 50 մ բ/ 60 մ գ/ 80 մ դ/ 120 մ
3. Ե՞րբ է իշխանության եկել Չանդրագուպտան. 0,5 մ.
ա/ Ք.ա. 321 թ. բ/ Ք.ա. 312 թ. գ/ Ք.ա. 322 թ. դ/ Ք.ա. 318 թ.
4. Ո՞ր արքան է ընդունել պատմության մեջ առաջին հռչակագիրը արական գծով գահաժառանգման վերաբերյալ. 0,5 մ.
ա/ Անիտտա բ/ Լաբարնա գ/ Տելեպինուս դ/ Ին Չժեն
5. Ե՞րբ է կառավարել Դիոկղետիանոս կայսրը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
1. Բաբուրի արշավանքը Հնդկաստան
2. Դելիի վերածումը մայրաքաղաքի Ջահան շահի կողմից
3. Վերջին սյոգունի տապալումը և Հոնսյուի խոշոր հողատերերի հպատակեցումը Օդա Նոբունագայի կողմից
4. Աստրախանի միացումը Ռուսաստանին
ա. 1573 թ. բ. 1628 թ. գ. 1556 թ. դ. 1526 թ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ Ք.ա. 415 թ. աթենական բանակը հաղթանակ է տարել Սիցիլիայում:
բ/ Հունա-բակտրիական արքաներից մեկը՝ Մենանդրոս Ի-ը (Ք.ա. 195/185-160 թթ.), ընդունել է բուդդայականություն:
գ/ Ք.ա. 45 թ. կատարվել է հռոմեական տոմարի բարեփոխում. լուսնային օրացույցը փոխարինվել է արևայինով:
դ/ 486 թ. Սուասոն քաղաքի մոտ ֆրանկները պարտության են մատնել բրիտանացիներին:

ե/ VI դ. եպիսկոպոս Վուլֆիլան սկսել է քրիստոնեություն տարածել գոթերի շրջանում և այդ նպատակով Աստվածաշունչը թարգմանել է գոթերեն:
զ/ 568 թ. գերմանացի լանգոբարդները գրավել են Հյուսիսային Իտալիան:
է/ Սասանյան արքա Կավադը 506 թ. գրավել է Կարինը, այնուհետև՝ Ծոփքը, Ամիդը և այլ շրջաններ:
ը/ 929 թ. Կորդովայի կառավարիչ Աբդարրահման III-ը իրեն է հայտարարել է խալիֆա:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Հին Հունաստանի հայտնի քանդակագործներից 2-ին,
բ. Հին հռոմեացիների կողմից առաջին անգամ կառուցված շինությունների տիպերից 2-ը:
9. Աշխատանք քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Հյուսիսարևմտյան Եվրոպայի ո՞ր պետությունն է պատկերված քարտեզում:
բ. Ո՞րերորդ դարերում է այնտեղ տեղի ունեցել նշանավոր հեղափոխություն:
10. Խաչակրաց ո՞րերորդ արշավանքի հետ է առնչվում ստորև պատկերված արքան. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական պաստառի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում աջ կողմում պատկերված անձը:
բ. Հետին պլանում զանգվածային տեսարանով ո՞ր իրադարձությունն է պատկերված:
գ. Ռազմաքաղաքական ո՞ր դաշինքի դեմ է այստեղ (պատերազմի երկրորդ փուլում) հանդես գալիս տարածք պաշտպանող շան տեսքով խորհրդանշաբար պատկերված պետությունը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

04.03.2025 թ.